

աւանդուով որ այս միւլթիին և իր արբանեակները ազատօրէն կը շրջին :

Այս իրողութիւնը , խնչպէս նաև միւլթիին Պաղչէ մուտքը իր որդւոյն հետ , ուր , իբր նշան ուրախութեան , ողջունուեցան հրացանաձգութեամբ իսլամ բռնակշուռներէն — որ սպառնալիքի տակ Հայերը ստիպած էր ի նպատակ միւլթիին հեռագիր քաշել և գոհունակութեան գիր մը ստորագրել — նոր քաջալերանք մը պիտի գտնէ իր սփրիններուն մէջ : Ընդհակառակը , վերոգրեալ դէպքերը Հայերուն համար պիտի ըլլան նոյնքան յուսահատութեան պատճառներ :

Ծշմարիտ Օսմանցիի իմ զգացումներս զիս կը մըղեն եզրակացնելու որ՝ այդ կարգի դէպքեր անկարելի կ'ընծայեն տարրերու միջեւ բարեկամական յարաբերութիւնները ո՛չ միայն այս տեղերուն՝ այլ և ամբողջ Կայսրութեան մէջ :

Գործելու այնպիսի ուղղութիւն մը ընդունած են , որուն ողբալի հետեւանքները հեռագրի մը մէջ խրտացընել կարելի չէ : Բայց և այնպէս կուգամ յանուն Հայրենիքին խնդրել որ այդ բանէն հրաժարին :

ՀԵՌՍԴԻՐ ՈՒՂՂՈՒՄԸ ՎՍՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Գաշուած 25 Մայիս 1325 (1909) թուականին

Մեր Յանձնաժողովը ծանօթացու այն հեռագրին՝ զոր Ատանայի կրօնական պետերը Ձեր վսեմութեան ուղղած էին :

Իմ կարծիքով ասոնք կատարելապէս իրաւունք ունին :

Այդէն դժուար չէր նախատեսել թէ պատերազմական տուտանը այս արդիւնքին պիտի յանդէր : Ահա